

## ՄԱՍ ԱՌԱՋԻՆ.

### Հետազոտության մեթոդաբանությունը

#### 1.1. Հետազոտության նկարագիրը

Անցումային շրջանում բնակչության կենսամակարդակի, աղքատության, դրա կառուցվածքի և պատճառների ուսումնասիրության նպատակով, 1996թ.-ից Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ, Հայաստանում անց են կացվում տնային տնտեսությունների հետազոտություններ: 2000թ.-ից այդ հետազոտություններն անց են կացվում համաձայն ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատվող ՀՀ Ազգային վիճակագրության ծառայության տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն: Այս աշխատանքների շարունակության ապահովմանն է ուղղված նաև ՀՀ Կառավարության 2002թ.-ի նոյեմբերի 28-ի № 1866-Ա որոշումը, ըստ որի հանրապետությունում առկա սոցիալ-տնտեսական ցուցանիշների և աղքատության գնահատման ու մոնիթորինգի համակարգի ներդրման նպատակով, առաջարկվել է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությանն ապահովել տնային տնտեսությունների՝ պարբերաբար (յուրաքանչյուր տարի) հետազոտությունների անցկացման հետ կապված աշխատանքների իրականացումը:

Առաջին երկու հետազոտություններն իրականացվել են Համաշխարհային Բանկի տեխնիկական աջակցությամբ: Տեղեկատվության հավաքագրման **առաջին հետազոտությունն** անցկացվել է մեկ ամսվա ընթացքում՝ 1996թ. նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը: Ընտրանքային համակցությունը կազմել է 5040 տնային տնտեսություն՝ ընդգրկելով հանրապետության ողջ տարածքը: Ընտրանքում ընդգրկվելու հավանականությունը հավասար է եղել բոլոր տնային տնտեսությունների համար: Այդ հետազոտության արդյունքները հրատարակվել են «Հայաստանի Հանրապետության սոցիալա-

## PART ONE.

### Survey Methodology

#### 1.1. Description of the Survey

To study the living standards, as well as structure and reasons for poverty of the population during the transition period, household surveys have been conducted since 1996 with the methodology of the World Bank. These surveys have been conducted in compliance with the annual work plan of National Statistical Service of RA ratified by RA State Council on Statistics. To assure the continuation of these activities the RA Government has adopted a Decree No 1866-U dated November 28, 2002, which suggested that RA National Statistical Service ensures the activities connected with the conduct of regular (on annual basis) surveys to introduce a system of evaluation and monitoring of the current socio-economic indicators and poverty in the country.

The first two surveys were conducted with the technical and financial assistance from the World Bank. **The first survey** was conducted within a month from November 15 to December 15, 1996. The sample population consisted of 5040 households covering the whole territory of the country. The chances for being included in the sample were equal for all households. The results of this survey were published in the first National Report “The Social Snapshot and Poverty in the Republic of Armenia” (RA Ministry of Statistical State Register and Analysis, Yerevan 1999).

**The second household survey** was con-

կան պատկերը և աղքատությունը» Ազգային առաջին զեկույցում (ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, Երևան 1999թ.):

Տնային տնտեսությունների **երկրորդ հետազոտությունն** անց է կացվել 12 ամիսների ընթացքում՝ 1998թ. հունիսի 1-ից մինչև 1999թ. հունիսի 30-ը: Հետազոտվել են հանրապետության կտրվածքով պատահական հավասար հավանականությամբ ընտրված 3600 տնային տնտեսություններ: Երկրորդ հետազոտության նպատակն է եղել նաև սննդամթերքի սպառման և դրա կառուցվածքի վրա սեզոնայնության ազդեցության բացահայտումն ու համահարթեցումը:

Համաշխարհային բանկի հետ տնային տնտեսությունների երկու հետազոտությունների իրականացման համատեղ աշխատանքային փորձն օգտագործելով՝ 2001թ.-ից ՀՀ ԱՎԾ շարունակում է անցկացնել տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի ընտրանքային հետազոտությունները: **Այդ հետազոտություններն** իրականացվում են Եվրոպական հանձնաժողովի պարենային ապահովության ծրագրի ֆինանսական աջակցությամբ և PADCO inc. ԱՄՆ խորհրդատվական ընկերության կողմից՝ ԱՄՆ Սիջազգային Ջարգացման Գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագրի տեխնիկական աջակցությամբ:

2001թ.-ին իրականացված հետազոտության ընտրանքը կազմել է 4128 տնային տնտեսություն, իսկ 2002թ.-ի հետազոտության ընթացքում հարցվել են 4644 տնային տնտեսություններ:

Վերոհիշյալ հետազոտություններն իրականացնելիս հաշվի են առնվել միջազգային հետևյալ չափանիշները, այն է.

- հետազոտությանը մասնակցող տնային տնտեսությունների համակցության ձևավորման ժամանակ տարածքային, հավասար հավանականությամբ ընտրության սկզբունքի կիրառում:
- Հետազոտությանը մասնակցելու տնային տնտեսությունների ինքնա-

ducted during 12 months from July 1, 1998 to June 30, 1999. 3600 households, randomly selected with equal probability, were interviewed nationwide. One of the goals of the second survey was to identify and level the influence of seasonality on food consumption during one year.

Based on the experience obtained during the joint implementation of the two household surveys together with the World Bank, the RA NSS continues to conduct household income and expenditure sample surveys since 2001. **The third and fourth surveys** were conducted with the financial assistance from Food Security Program of the European Commission and the technical support from the USAID funded Armenia Social Transition Program implemented by PADCO Inc. USA consulting company. The sample of the 2001 survey covered 4128 households, while 4644 households were interviewed during the survey of 2002.

While conducting the above-mentioned surveys the following international standards were taken into consideration:

- Application of the principle of equal probability for territorial selection of households during the formation of the sample population of households participating in the survey.
- Voluntary participation by households in the survey
- Regular rotation of households
- Each household is surveyed during a month.
- Receiving scientifically grounded assessment of the accuracy and

կամ համաձայնություն:

- Տնային տնտեսությունների պարբերական ռոտացիա /փոփոխում/:
- Յուրաքանչյուր տնային տնտեսություն հետազոտվում է մեկ ամսվա ընթացքում:
- Տեղեկատվության ճշգրտության և որակի մասին գիտականորեն հիմնավորված գնահատականների ստացում:

## 1.2. Ընտրանքային համակցության ձևավորման սկզբունքները

Վերոհիշյալ հետազոտություններն իրականացնելիս ընտրանքային համակցության կառուցման համար կիրառվել է երկաստիճան (երկփուլ) պատահական ընտրանքի մեթոդը:

1998/99թթ.-ի հետազոտության ժամանակ ստացին աստիճանում, պատահական ընտրանքի մեթոդով, ընտրվել են 180 քլաստերներ՝ ըստ գլխավոր համակցության կայուն սահմանված միջակայքի («քայլի»): Քլաստերը դա ընտրանքի առաջնային տարածքային միավորն է: Յուրաքանչյուր քլաստերում հետազոտվել են 20 տնային տնտեսություններ: Գյուղական վայրերում և 23 փոքր քաղաքներում քլաստերը հավասարեցվել էր ամբողջ գյուղին և քաղաքին: Հինգ քաղաքներում ընտրվել էր երկուական, 2 քաղաքներում՝ երեքական, Գյումրիում՝ 11, Վանաձորում՝ 6 և Երևանում՝ 53 քլաստեր: Գյումրիում, Վանաձորում և Երևանում որպես քլաստեր են ծառայել գործող ԲՇՏ-ները և մասնավոր հատվածները: Ընտրանքի երկրորդ աստիճանում յուրաքանչյուր քլաստերի տնային տնտեսությունների ցուցակից պատահական մեթոդով ընտրվել են 20 տնային տնտեսություններ:

2001-2002թթ.-ին իրականացված հետազոտությունների ժամանակ ստացին փուլում ընտրվել են բնակավայրերը՝ քաղաքները և գյուղերը, իսկ երկրորդ փուլում այդ բնակավայրերում տնային տնտեսությունները:

Հետազոտություններն իրականացվել են

quality of the information.

## 1.2. Principles of Formation of Sample Population

To design the sample population of the above-mentioned surveys a method of two-staged random sample was applied.

During 1998-99 survey, by the first stage of sampling 180 clusters were selected on the basis of the fixed range (“step”) from the general population. A cluster is the primary territorial unit of the sample. 20 households were surveyed in each cluster. In rural areas and in 23 small cities the cluster covered the whole village or city. Two clusters were selected in five cities, three clusters in 2 cities, 11 in Gyumri, 6 in Vanadzor and 53 in Yerevan. Territories of operating ZHEKs and private sectors served as clusters in Gyumri, Vanadzor and Yerevan cities. By the second phase of the sampling 20 households were selected at random from the list of households in each cluster.

During the 2001 and 2002 surveys, the first stage covered the selection of settlements – cities and villages, while the second stage was focused on the selection of households in these settlements.

The surveys were conducted on the principle of monthly rotation of households by clusters (sample units).

In compliance with the sample of the

ըստ քլաստերների (ընտրանքային միավորների), տնային տնտեսությունների ամսական ռոտացիայի սկզբունքով:

Համաձայն 1998/99թթ.-ի հետազոտության ընտրանքի, ամսական հետազոտվել է 15 քլաստեր, այսինքն՝ մեկ ամսվա ընթացքում 300 տնային տնտեսություն, ընտրանքում ընդգրկելով 104 բնակավայր՝ 33 քաղաք և 71 գյուղ:

Համաձայն 2001թ.-ի հետազոտության մեթոդաբանության, յուրաքանչյուր ամիս հետազոտվել և ռոտացիայի է ենթարկվել 344 տնային տնտեսություն, ընտրանքում ընդգրկելով 19 քաղաք և 28 գյուղ, իսկ 2002թ.-ին՝ 387 տնային տնտեսություն, ընտրանքում ընդգրկելով 14 քաղաք և 30 գյուղ:

Հարցումն իրականացրել են պարբերաբար վերապատրաստում անցնող 43 հարցազրուցավարներ: Յուրաքանչյուր հարցազրուցավար ամսական հետազոտել է 8-9 տնային տնտեսություն՝ այցելելով յուրաքանչյուր տնային տնտեսություն առնվազն 4 անգամ: Այցելությունների նպատակն է եղել ոչ միայն տնային տնտեսության հարցաթերթի լրացումը, այլ նաև հարցվողին, տնային տնտեսության օրագիրը լրացնելիս, օժանդակելը: Հավաքագրված հարցաթերթերը և օրագրերն անցել են կողմնորոշում ու տրամաբանական ստուգում և անհրաժեշտության դեպքում վերադարձվել են տնային տնտեսություններ՝ տեղեկատվության ճշգրտման նպատակով: Հավաքագրված տեղեկատվությունը մուտքագրվել և խմբագրվել է, որի արդյունքում ձևավորվել է 4644 տնային տնտեսությունների վերաբերյալ տվյալների բազա (2001թ.-ին տվյալների բազան պարունակում էր տեղեկատվություն 4037 տնային տնտեսությունների վերաբերյալ):

### 1.3. Հետազոտության գործիքները

ՀՀ ԱՎԾ-ն տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություններն իրականացնում է երկու տարբեր գործիքների կիրառմամբ:

**Առաջին գործիքը՝ հարցաթերթը**, լրացվում է հարցազրուցավարի կողմից, ամս-

survey of 1998-99, 15 clusters were surveyed monthly, which means 300 households within a month, and the sample covered 104 settlements – 33 cities and 71 villages.

In the 2001 survey, 344 households were surveyed and rotated every month with the sample covering 19 cities and 28 villages, while in 2002 the number of households was 387 with the sample covering 14 cities and 30 villages.

The surveys were conducted by 43 regularly trained interviewers within 12 months. Each of them interviewed 8-9 households in a month visiting them for at least 4 times. The goal of the visits was not only to complete the questionnaire of the household but also to assist the interviewee in the filling in the household diary. The collected questionnaires and diaries were coded, logically tested and in case of necessity were returned to the households to verify the information received. The collected information was entered and edited as a result of which a database of 4644 households was formed (in 2001 the database comprised information on 4037 households).

### 1.3. Survey Tools

RA NSS uses two different survey tools to conduct the sample surveys of households.

**The first one** is a questionnaire, which is completed by the interviewer during

վա ընթացքում տնային տնտեսություն կատարած չորս այցելությունների ժամանակ: Տնային տնտեսության գլխավորի կամ այլ չափահաս անդամի հետ անմիջական հարցազրույցի ընթացքում հարցազրույցավարը հավաքագրում է տեղեկատվություն տնային տնտեսության կազմի, բնակարանային պայմանների, տնային տնտեսության անդամների կրթական մակարդակի և առողջական վիճակի, զբաղվածության կարգավիճակի, հողամասի, անասունների և գյուղտեխնիկայի առկայության և օգտագործման, տնային տնտեսությունների միջև դրամական և ապրանքային հոսքերի մասին:

**Երկրորդ գործիքը օրագիրն է**, որը լրացնում է անմիջապես տնային տնտեսությունը մեկ ամսվա ընթացքում: Ամեն օր տնային տնտեսությունը գրանցում է կատարած բոլոր ծախսերը, տալով դրանց մանրամասն նկարագիրը, օրինակ գնված սննդամթերքի համար նշվում է ապրանքի անունը, քաշը, արժեքը և այն վայրը, որտեղից գնվել է այդ ապրանքը: Բացի այդ օրագրում տնային տնտեսությունը նշում է նաև տնամերձ հողակտորից ստացված և օգտագործված ապրանքների սպառումը, ինչպես նաև այլ տնային տնտեսություններից ստացված ապրանքները: Ամսվա վերջում լրացվում է նաև քիչ քանակությամբ սպառվող սննդամթերքի մասին և երկարաժամկետ օգտագործման ապրանքների կամ ծխակատարությունների մասին տեղեկատվությունը: Օրագրում կատարված գրանցումները ստուգվում են հարցազրույցավարի կողմից՝ նույն ամսվա ընթացքում, հարցաթերթի լրացման նպատակով, տնային տնտեսություն կատարած իր չորս այցելությունների ընթանքում: Օրագրի միջոցով ստացված տեղեկատվությունը հնարավորություն է տալիս դիտարկել

- մեկ ամսվա ընթացքում տնային տնտեսության եկամուտները, ծախսերը և սննդամթերքի սպառումը.
- տնային տնտեսությունների սպառողական ծախսերի /պարենային և ոչ պարենային ապրանքների, ինչպես նաև ծառայությունների ձեռք

his/her four visits to the household within a month. During the face to face interviews with the head of the household or another adult member the interviewer collects information on the composition and housing conditions of the household, level of education and health state of household members, their employment status, land ownership, availability and utilization of cattle and agricultural equipment, as well as money and in kind flows between the households.

**The second tool is the diary**, which is completed directly by the household within a month. Every day the households recorded all their expenses with detailed description of what they bought, for example the name of the product, its weight, cost and the place where it was bought from. In addition, the households recorded also the consumption of products, which were received and utilized from their own farms, as well as products which were received from other households. At the end of the month the information on rarely utilized food products, durable goods and ritual services is also recorded. The records in the diary are verified by the interviewer during his/her four visits to the household within the same month.

The information received through the diary makes it possible to observe:

- The incomes, expenditures and food consumption of the household within one month
- The structure of consumer expenses of households (expenses on food and non-food products, as well as monetary expenditures to receive services).

բերման նպատակով կատարվող դրամական ծախսերի/ կառուցվածքը.

- տնային տնտեսության նյութական բարեկեցության վրա սեփական տնտեսության ազդեցությունը /տնամերձ տնտեսությունից սեփական օգտագործման համար մթերքի ստացում և օգտագործում, ինչպես նաև դրամական միջոցների ստացում դրա վաճառքից և այլն/:
- տնային տնտեսության եկամուտների աղբյուրներն ու կառուցվածքը: Ընդ որում առանձին-առանձին ուսումնասիրվում են տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի կողմից ստացվող եկամուտները /աշխատանքի վարձատրություն, կենսաթոշակ, կրթաթոշակ, գործազրկության նպաստ և այլն/, ինչպես նաև ընդհանուր առմամբ տնային տնտեսություն մուտք գործող եկամուտների տեսակները /երեխաներին տրամադրվող աջակցություն, բարեկամների կամ այլ անձանց կողմից տրամադրվող օժանդակություն, անշարժ գույքի և սեփականության վաճառքից ստացվող եկամուտներ, աղքատության ընտանեկան նրպաստներ, խնայողությունների օգտագործում և այլն/:

Սույն ժողովածուն ամփոփում է ամսվա կտրվածքով լրացված օրագրերի միջոցով հավաքագրված տեղեկատվությունը:

**Օրագիրը կազմված է հետևյալ բաժիններից.**

1. օրվա ընթացքում գնված սննդամթերք,
2. օրվա ընթացքում տանը սպառված սննդամթերք,
3. տանից դուրս սպառված սննդամթերքի վրա կատարված ծախսեր,
4. գնված ոչ պարենային ապրանքներ և ստացված ծառայություններ,
5. անվճար ստացված ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ,
6. տնային տնտեսության եկամուտներ,
  - 6.1 վարձու աշխատանք, ներառյալ վարձատրությունը բնամթերքով,

- The impact of the household's own farm on its welfare (food from received from its own farm and utilized for own consumption, as well as money received from the sale of this products etc.)
- Structure and sources of household incomes. It should be mention that income received by each member of the household (payment for work, pensions, stipendia, unemployment benefits etc.) as well as the different types of income received in general by the household (benefits for children, assistance from relatives or other persons, income from the sale of real estate and property, poverty family benefits, use of savings etc.) are studied separately.

This publication summarizes the information collected through the diaries and completed within a month.

**The diary consists of the following sections:**

1. Food purchased each day,
2. Food consumed at home each day,
3. Expenditures on food consumed elsewhere,
4. Purchased non-food products and services received,
5. Non-food products and services received for free,
6. Incomes of the household,
  - 6.1 from hired job, including in-kind payments,
  - 6.2 self-employment,
  - 6.3 pensions
  - 6.4 compensations for privileges,
  - 6.5 benefits for children,
  - 6.6 benefits for single mothers,
  - 6.7 unemployment benefits,

- 6.2. ինքնագրավածություն,
- 6.3. կենսաթոշակ,
- 6.4. արտոնությունների դիմաց փոխատվություններ,
- 6.5. նպաստ երեխաների համար,
- 6.6. նպաստ միայնակ մայրերին,
- 6.7. գործազրկության նպաստ,
- 6.8. կրթաթոշակ,
- 6.9. ընտանեկան նպաստներ և այլն,
- 6.10. գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունից և իրացումից,
- 6.11. անշարժ գույքի վաճառքից (ամառանոց, տուն, հող),
- 6.12. արժեքավոր իրերի վաճառքից (մեքենա, գարդեղեն, կահույք),
- 6.13. սեփականությունից (վարձակալություն, տոկոսներ, դիվիդենդներ),
- 6.14. դրամական օգնություն Հայաստանում ապրող հարազատներից,
- 6.15. դրամական օգնություն Հայաստանից դուրս ապրող հարազատներից,
- 6.16. մարդասիրական օգնություն՝ գնահատված դրամներով,
- 6.17. վարկերի, պարտքերի գումարներ,
- 6.18. վերցված խնայողություններից,
- 6.19. արժեթղթերի վաճառքից,
- 6.20. այլ եկամուտ:
7. սննդամթերքի տեսակներ, որոնք սովորաբար օրվա ընթացքում սպառվում են քիչ քանակությամբ,
8. երկարաժամկետ օգտագործման ապրանքների և ծիսական ծառայությունների ցանկ,
9. տարվա ընթացքում սննդամթերքի սպառում,
10. ամսվա ընթացքում բացակա օրերի թիվը:

#### **1.4. Տվյալների որակի գնահատման մեթոդաբանություն**

Ընտրանքային հետազոտության տվյալների հիման վրա ստացված ցուցանիշների որակի գնահատման և արդյունքների ճիշտ մեկնաբանման համար կարևոր նշանակություն ունի ընտրանքի սխալի

- 6.8 stipendia,
- 6.9 family benefits etc.
- 6.10 production and sale of agricultural products,
- 6.11 sale of real estate (cottage, house, land),
- 6.12 sale of expensive goods (car, jewelry, furniture),
- 6.13 from property (renting, interests, dividends),
- 6.14 financial assistance from relatives living in Armenia,
- 6.15 financial assistance from relatives living outside Armenia,
- 6.16 humanitarian aid evaluated in drams,
- 6.17 credits and debt funds,
- 6.18 savings,
- 6.19 sale of securities,
- 6.20 Other income.
7. Types of food products that usually consumed in little quantity during a day.
8. List of durable goods and ritual services,
9. Consumption of food during the year,
10. Number of days absent from household in a month.

#### **1.4. Methods of Data Quality Assessment**

In order to assess the quality of data received from sample surveys and to present the correct interpretation of these data it is important to have information on sample error.

չափի մասին տեղեկատվությունը: Ընտրանքի սխալը պաշտոնական վիճակագրության մեջ հանդիսանում է ընտրանքային հետազոտության տվյալների որակը բնութագրող և այդ տվյալների ներկայացուցչականությունը գնահատող առավել հաճախ կիրառվող ցուցանիշ: Ընտրանքի սխալը ցույց է տալիս, թե ընտրանքային հետազոտության տվյալների հիման վրա ստացված ցուցանիշները որքանով են տարբերվում այն ցուցանիշներից, որոնք կարող էին ստացվել համընդգրկուն (համատարած) հետազոտության դեպքում:

Ընտրանքի սխալի վերլուծության ժամանակ, որպես կանոն հաշվարկվում են ցուցանիշների բաշխվածության դիսպերսիան, միջին քառակուսային շեղումը, ընտրանքի ստանդարտ սխալը, վստահության միջակայքի սահմանները՝ ցուցանիշի հնարավոր արժեքների միջակայքն ըստ ընտրանքային հետազոտության տվյալների:

Մույն ժողովածուի մեջ ընդգրկված հիմնական ցուցանիշների որակի գնահատման համար օգտագործվել է SPSS տվյալների մշակման վիճակագրական փաթեթի հնարավորությունները: Հավելված 1-ում ներկայացված են հիմնական ցուցանիշների որակի հետևյալ գնահատականներն իրենց հաշվարկման բանաձևերով.

- Միջին արժեքը - ցուցանիշի միջին թվաբանական արժեքը,
- Ցուցանիշի նվազագույն և առավելագույն արժեքները,
- միջինի 95% վստահության միջակայքի վերին և ստորին սահմանները, այս երկու ցուցանիշները նկարագրում են դիտարկվող ցուցանիշի միջին արժեքի 95% վստահության միջակայքը, այսինքն թե որ միջակայքում է գտնվում առավել ստույգ միջինը:
- գտված միջինը - դիտարկվող ցուցանիշի միջին արժեքը՝ առանց 5% նվազագույն և առավելագույն արժեքների,
- մեդիանան - այն արժեքը, որը դիտարկվող ցուցանիշի հերթականությամբ բաշխված արժեքների շարքը բաժանում է երկու հավասար մասերի:
- դիսպերսիան - գործակից, որը թույլ է

The sample error is the most frequently used indicator characterizing the quality and representativeness of data of sample surveys in official statistics. The sample error indicates how much the indicators received from the sample survey vary from the ones that could be received in case of whole population (entire) survey.

When analyzing the sample error, the following indicators are normally calculated: variance of values, standard deviation, standard error, confidence interval (interval of possible values of the indicator according to the survey results).

To assess the quality of main indicators presented in this publication the SPSS data processing software was used. In Annex 1 the following estimations of quality of the main indicators and formulas of their calculation are presented:

- Mean – is the arithmetic average value of the indicator
- Minimum and maximum values of the given indicator
- 95% confidence interval for mean – indicates the interval where the most precise mean is placed with 95 % of confidence.
- 5% trimmed mean – mean without 5% minimum and maximum values
- Median – is the middle observation when the data values are ordered from smallest to largest.
- Variance – parameter which allows estimation of dispersion of the values of the given indicator



տալիս գնահատել դիտարկվող ցուցանիշի արժեքների ցրվածությունը: Այն թույլ է տալիս գնահատել, թե որքանով են դիտարկվող ցուցանիշի արժեքները մոտ գտնվում միջին արժեքից: Որքան մեծ է դիտարկվող ցուցանիշի արժեքների ցրվածությունը միջինից, և որքան այն փոքր է, այնքան փոքր է նաև ցրվածությունը:

- Միջին քառակուսային շեղումը - այն դիտարկության քառակուսի արմատն է: Եթե տվյալ ցուցանիշի արժեքների բաշխվածությունը նորմալ է, ապա այդ ցուցանիշի արժեքների 95 տոկոսը պետք է գտնվի այդ ցուցանիշի միջին արժեքին գումարած և հանած (պլյուս, մինուս) երկու միջին քառակուսային շեղում:
- միջինի ստանդարտ սխալը – ցուցանիշի ընտրանքային միջինների ստանդարտ շեղումն է: Ստանդարտ սխալը օգտագործվում է գնահատելու համար, թե որքանով է ընտրանքային հետազոտությանը ստացված միջին արժեքը շեղվում գլխավոր համակցության մեջ տվյալ ցուցանիշի միջին արժեքից: Այն միջին քառակուսային շեղման հարաբերությունն է ընտրանքի չափի քառակուսի արմատին:

### 1.5. Տնային տնտեսությունների կենսապայմանները բնութագրող վիճակագրական ցուցանիշների և տերմինների բացատրություն

Հետազոտության առարկան տնային տնտեսությունն է: **Տնային տնտեսություն** ասելով հասկանում ենք մեկ կամ մի քանի անձինք, որոնք բնակվում են միասին, վարում են միասնական տնտեսություն և ունեն միասնական բյուջե /համատեղ են կատարում բնակարանի պահպանման, սննդի և այլնի հետ կապված ծախսերը/: Ընդ որում, ի տարբերություն ընտանիքի սահմանման, տնային տնտեսությունում բարեկամական կապերի առկայությունը պարտադիր չէ:

tor. The greater the variance the greater the dispersion and the smaller the variance, the smaller the dispersion.

- Standard Deviation – the square root of the variance. If the distribution of values is normal then roughly 95% of the observations should fall into the interval formed by the mean plus and minus two standard deviations.
- Standard error of the mean—the standard deviation of the sampling distribution of the mean. It is used to assess the precision with which the population mean is estimated from the sample. It is the sample standard deviation divided by the square root of the sample size.

### 1.5. Explanation of statistical indicators and concepts describing the living conditions of households

The subject of the survey is the household. By saying a **household** we understand one or several persons, who usually reside under the same roof, share food and housekeeping and have the same budget (share expenditures on house maintenance, food etc.). However, unlike the definition of the family, the members of the household do not necessarily have to be relatives.

The results of the survey are processed:

- by the type of settlement of households residence (urban

Հետազոտության արդյունքները մշակվում են.

- ըստ տնային տնտեսությունների բնակավայրի տեսակի /քաղաքային բնակավայր, գյուղական բնակավայր/:
- ըստ տնային տնտեսությունների բանական կազմի /մեկ, երկու, երեք, չորս, հինգ և ավելի անդամ/:
- ըստ տնային տնտեսությունում երեխաների թվի /մեկ, երկու, երեք, չորս, և ավելի/:
- ըստ տնային տնտեսության գլխավորի տարիքի և սեռի.

**տղամարդ գլխավոր ունեցող տնային տնտեսություններ**, այդ թվում ըստ հետևյալ տարիքային խմբերի՝

- 17-22 տարեկան
- 23-29 տարեկան
- 30-39 տարեկան
- 40-49 տարեկան
- 50-59 տարեկան
- 60 տարեկան և բարձր

**կին գլխավոր ունեցող տնային տնտեսություններ**, այդ թվում ըստ հետևյալ տարիքային խմբերի՝

- 17-22 տարեկան
- 23-29 տարեկան
- 30-39 տարեկան
- 40-49 տարեկան
- 50-59 տարեկան
- 60 տարեկան և բարձր

- տնային տնտեսությունների բաշխումն ըստ մեկ շնչի հաշվով դրամական ծախսերի չափի
- տնային տնտեսությունների բաշխումն ըստ դեցիլային խմբերի, ըստ մեկ շնչի հաշվով դրամական ծախսերի չափի

Մննդամթերքի սպառումը ստացվել է օրագրի՝ «Օրվա ընթացքում տանը սպառված սննդամթերք» բաժնում գետեղված տվյալներից և կշռվել է յուրաքանչյուր շնչի համար՝ ըստ հետազոտված ամսվա ընթացքում ներկա օրերի:

Որպես տնային տնտեսությունների կենսական պայմանները բնութագրող հիմնական ցուցանիշներ այս ժողովածուի մեջ դիտարկվել են.

- սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշները

- settlements, rural settlements),
- by the composition of households (one, two, three, four, five and more members),
- by the number of children in the household (one, two, three, four and more children),
- by the gender and age of the head of the household.

**Male headed households, including** by the following age groups of the head of household:

- 17-22 years of age
- 23-29 years of age
- 30-39 years of age
- 40-49 years of age
- 50-59 years of age
- 60 and over years of age.

**Female headed households** including by the following age groups of the head of household:

- 17-22 years of age
- 23-29 years of age
- 30-39 years of age
- 40-49 years of age
- 50-59 years of age
- 60 and over years of age.

- distribution of households by per capita monetary expenditures
- distribution of households by decile groups and by per capita monetary expenditures.

Food consumption was received through the information recorded in the section “*food consumed at home each day*” and was weighted by per days of presence in the household within a month.

As the most characteristic indicators for

- տնային տնտեսությունների եկամուտները
- տնային տնտեսությունների ծախսերը
- սննդամթերքի սպառումը:

**Սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշներ**  
 Հետազոտության ընթացքում որոշվում են տնային տնտեսության յուրաքանչյուր անդամի սոցիալական և ժողովրդագրական բնութագրիչները: Այդ նպատակով օգտագործվում են հետևյալ սահմանումները.

- **Երեխաներ** – 16 տարին չլրացած, չամուսնացած անձինք
- **Չափահասներ** – 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի ամուսնացած կամ չամուսնացած անձինք
- **Կենսաթոշակատուներ** – չաշխատող և կենսաթոշակ ստացող անձինք
- **Աշխատողներ** – անձինք, որոնք դրական են պատասխանել «ներկայումս աշխատո՞ւմ եք» հարցին: Աշխատող կենսաթոշակատուները նույնպես պատկանում են «աշխատողների» խմբին:
- **Գործազուրկներ** – անձինք, որոնք բացասական պատասխան են տվել «ներկայումս աշխատո՞ւմ եք» հարցին:
- **Տնային տնտեսության գլխավոր /տնային տնտեսությունը գլխավորող անձ/** - սահմանվում է համաձայն տնային տնտեսության անդամների որոշման:

**Տնային տնտեսությունների եկամուտները**

Տնային տնտեսությունների նյութական վիճակի բազմակողմանի ներկայացման նպատակով, տնային տնտեսությունների կենսական պայմանները նկարագրող ցուցանիշների կազմում ընդգրկվել են տնային տնտեսության եկամուտները, որոնք բաշխվել են ըստ հետևյալ ենթախմբերի.

- Ընթացիկ եկամուտներ
- Ամբողջական եկամուտներ

Սույն հետազոտության շրջանակում տնային տնտեսությունների **եկամուտներ** ստեղծվ հասկանում ենք՝ դրամական և

the living conditions of households the following ones were considered in this publication:

- socio-demographic indicators
- household incomes
- household expenditures
- food consumption.

**Socio-demographic indicators**

The social and demographic characteristics of each member of the household are defined during the survey. For this purpose the following definitions are used:

- Children –persons under 16 years of age,
- Adults – single or married persons aged 18 years or older,
- Pensioners – persons who do not work and receive a pension,
- Employed – persons who gave a positive answer to the question “Do you currently work?” Working pensioners also belong to the group of “employed”,
- Unemployed – persons who gave a negative answer to the question “Do you currently work?”
- Head of the household (person who is heading the household) - defined according to the decision of the members of the household.

**Household Incomes**

To give a comprehensive description of the financial situation of households,

բնամթերքով ստացված բոլոր եկամուտների տեսակները, ինչպես նաև սոցիալական աջակցության բոլոր տեսակները, ներառյալ բնակարանային-կոմունալ ծառայությունների վարձավճարների դիմաց արտոնությունները, նվերները, սեփականության և անշարժ գույքի վաճառքից ստացվող եկամուտները, օգտագործված խնայողությունները և այլն:

Տնային տնտեսության **ընթացիկ դրամական եկամուտները** բաղկացած են դրամական և բնամթերքով /դրամական արտահայտությամբ/ մուտքերի գումարից, որոնք ստացվել են տնային տնտեսության անդամների կողմից որպես աշխատանքի վարձատրություն /չեն հաշվառվում եկամտահարկը և աշխատավարձից այլ պարտադիր սոցիալական վճարումները/, ինքնազբաղվածության արդյունքում կամ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված գումարները, սեփականության վարձակալությունից ստացված գումարները, տոկոսների, դիվիդենդների, բաժնետոմսերի և այլ արժեթղթերի վաճառքից ստացված գումարները, անշարժ գույքի և տան ունեցվածքի, անասունների, սեփական տնտեսությունից ստացված մթերքի և պահածոների վաճառքից ստացված գումարները, սոցիալական աջակցության, կենսաթոշակների, կրթաթոշակների, ինչպես նաև բարեկամների և այլ անձանց կողմից տրամադրված օժանդակության կամ այլ դրամական եկամուտների տեսքով ստացված գումարները:

Տնային տնտեսությունների **ամբողջական եկամուտը** կազմված է դրամական եկամուտների բոլոր հոդվածներից և այնպիսի ոչ դրամական եկամուտներից, ինչպիսիք են սեփական տնտեսությունից ստացված սննդամթերքը՝ դրամական արտահայտությամբ, ինչպես նաև անվճար ստացված ոչ պարենային ապրանքները և ծառայությունները:

**Տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքը** ներկայացված է ստորև.

#### ***Դրամական եկամուտներ***

- Աշխատանքի դիմաց վարձատրություն

the indicators on incomes of households were included in the list of characteristics describing the living standards. The income indicators have been divided into the following subgroups:

- Current incomes
- Total incomes

Within this survey, as **household incomes** we consider all types of incomes received in money or in-kind, as well as all types of social assistance including subsidies provided for housing services, presents, incomings received from the sale of the property and real estate, used savings and etc.

The **current monetary incomes** of the household consist of the sum of monetary and in-kind incomings (expressed in money) of all household members received as a remuneration for work (income tax and other mandatory social contributions are not included), funds received from self-employment or entrepreneurship, funds received as property rent interests, from the sale of dividends, bonds and other securities, real estate and housing utensils, livestock, products received from own farms and canned food, as well as funds received as social assistance, pension, stipendium or from relatives and other persons etc.

**The total household income** of consists of all articles of monetary incomes as well as non-monetary incomes such as food products received from own farms expressed in money, and non-food products and services received free of charge.

**The structure of incomes of households** is presented below:

- Չեռնարկատիրական գործունեությունից կամ ինքնագրադավաժությունից ստացված եկամուտներ
  - Կենսաթոշակներ
  - Կրթաթոշակներ
  - Սոցիալական աջակցություն – ընդամենը
- այդ թվում՝
- գործազրկության նպաստ
  - աղքատության ընտանեկան նպաստ
  - նպաստ երեխաների համար
  - այլ տեսակի աջակցություններ
  - Գյուղատնտեսական ապրանքների վաճառքից ստացված եկամուտներ
  - Անձնական իրերի և տան գույքի վաճառքից ստացված եկամուտներ
  - Անշարժ գույքի վաճառքից ստացված եկամուտներ
  - Սեփականությունից ստացված եկամուտներ /բաժնետոմսերից և այլ արժեթղթերից ստացված դիվիդենդներ, ներդրումներից ստացված տոկոսներ, անշարժ գույքի վարձակալումից ստացված եկամուտներ և այլն/:
  - Բարեկամներից և այլ անձանցից ստացված դրամական օգնություն
  - Այլ դրամական եկամուտներ

***Ոչ դրամական եկամուտներ***

- Սեփական տնտեսությունից և ինքնամթերումից ստացված մթերքի արժեքը
- Բարեկամներից և այլ անձանցից ստացված սննդամթերքի դրամական արժեքը
- Արտոնություններ և սուբսիդիաներ բնակարանային-կոմունալ ծառայությունների վճարման համար
- Արտոնություններ սանատորիաների, հանգստյան տների ուղեգրերի ձեռք բերման համար, միջազգային տրանսպորտից, կապից օգտվելու համար

**Գրամական եկամուտների և ոչ դրամական եկամուտների գումարը կազմում է ամբողջական եկամուտները:**

***Monetary incomes***

- Remuneration for work performed
- Incomes received from entrepreneurship or self-employment
- Pensions
- Stipendia
- Social assistance – total including
  - unemployment benefits
  - poverty family benefits
  - benefits for children
  - other types of assistance
- Incomes from the sale of agricultural products
- Incomes from the sale of personal items and housing utensils
- Incomes from the sale of real estate
- Incomes from property (dividends received from bonds and other securities, investment interests, incomes received from the rent of real estate and etc.)
- Monetary assistance received from relatives and other persons.
- Other monetary incomes.

***Non-monetary incomes***

- Cost of food products received from the own farm and home produced food consumed.

**Ամբողջական եկամտի  
բաղկացուցիչների  
սահմանումները**

**Աշխատանքի վարձատրություն** - աշխատավարձ, հավելավճարներ և այլ պարգևատրումներ, վճարումներ և աջակցություններ՝ ստացված հիմնական և լրացուցիչ աշխատանքի վայրերից դրամով և բնամթերքով, բացառությամբ եկամտահարկի և գործող օրենսդրության համաձայն կատարվող այլ պահումների:

**Ճեռնարկատիրական գործունեությունից և ինքնազբաղվածության արդյունքում ստացված եկամուտներ** – սեփական եկամուտներ՝ ստացված ձեռնարկատիրական, գյուղատնտեսական և ինքնուրույն վարվող տնտեսական գործունեության արդյունքում /այսինքն՝ առանց այդ գործունեության հետ կապված ծախսերը հաշվի առնելու/:

**Կենսաթոշակներ** - աշխատանքային և սոցիալական կենսաթոշակների բոլոր տեսակները. տարիքային, հաշմանդամության, կերակրողին կորցնելու, սոցիալական, զինծառայողներին տրամադրվող և այլ կենսաթոշակներ:

**Կրթաթոշակներ** – կրթաթոշակների բոլոր տեսակները, որոնք վճարվում են ուսումնական հաստատություններում սովորողներին, ներառյալ այն կրթաթոշակները, որոնք վճարվում են ձեռնարկությունների և կազմակերպությունների կողմից, ինչպես նաև ասպիրանտներին և օրդինատորներին վճարվող կրթաթոշակները և այլ վճարումներ:

**Նպաստներ** – պետական և համայնքային բյուջեներից, սոցիալական աջակցության ֆոնդերից, արհեստակցական միությունների կողմից, ձեռնարկությունների հաշվին և այլ աղբյուրներից բնակչությանը՝ ամեն ամիս կամ միանվագ, տրամադրվող աջակցություն: Հիմնական նպաստներն են.

1. **Աղբյուրության ընտանեկան նպաստ** – հասցեական սոցիալական աջակցություն կարիքավոր ընտանիքներին, բնակչության սոցիալապես անապահով խմբերին նյութական օժանդակության տրամադրման նպատակով:

- Monetary value of the food products received from relatives and other persons
- Privileges and subsidies provided for paying fees for housing services
- Privileges provided for referrals to sanatoriums and rest homes and for the use of international transportation and communication services.

**The sum of monetary and non-monetary incomes comprise the total income of households.**

**Definitions of the Income Components**

**Remuneration for work performed** – salaries, wages, supplements and other rewards, payments and assistance received in money or in-kind from the permanent or supplementary working places, except for deductions made in compliance with the current legislation.

**Incomes from entrepreneurship and self-employment** – personal incomes received as a result of entrepreneurship, agricultural and independent economic activities (expenses connected with these activities are not included).

**Pensions** – all types of labor and social pensions, old age, disability, survivor, social pensions and those provided to military servants etc.

**Stipendium** – all types of stipendia, which are paid to students of education institutions, including the stipendia, which are paid by enterprises and organizations, as well as stipendia paid to

2. Գործազրկության նպաստ - աջակցություն, որը տրամադրվում է աշխատունակ տարիքի չափատող քաղաքացիներին, որոնք ունեն գործազուրկի կարգավիճակ /գրանցված են գրադավաժության պետական ծառայությունում/:

3. Աջակցություն երեխաներին – միանվագ նպաստ կապված երեխայի ծննդյան հետ, մինչև 2 տարեկանը երեխայի խնամքի համար տրամադրվող աջակցություն:

4. Այլ աջակցություն – աջակցություն ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված անձանց ընտանիքներին, թաղման համար տրամադրվող աջակցություն, տեղական իշխանությունների կողմից տրամադրվող աջակցության բոլոր տեսակները, հաշմանդամների, ծերերի խնամքի համար տրամադրվող աջակցություն և այլն:

**Սեփականությունից ստացվող եկամուտներ** - բաժնետոմսերից կամ այլ արժեթղթերից ստացված դիվիդենդներ, բանկային ներդրումներից ստացվող եկամուտներ, անշարժ գույքի /բնակարան, ավտոտնակ, ամառանոց, հողատարածք և այլն/ վարձով տրման արդյունքում ստացված եկամուտներ:

**Սեփականության և անձնական ունեցվածքի վաճառքից ստացված եկամուտներ** - դրամական եկամուտներ՝ ստացված սեփականության կամ անձնական ունեցվածքի վաճառքից՝ /ավտոմեքենա, ոսկերչական զարդեր, հագուստ, կահույք և այլն/ անկախ դրանց սկզբնական արժեքից:

**Սեփական տնտեսությունից ստացված եկամուտներն** ունեն երկու բաղկացուցիչ.

1. գյուղատնտեսական ապրանքների վաճառքից ստացված դրամական եկամուտներ – որոնք արտադրվել են սեփական տնտեսությունում,

2. սեփական տնտեսությունից և ինքնամթերումից ստացված և սպառված արտադրանքի արժեքը - ընդգրկում է սեփական տնտեսությունից ստացված սննդամթերքի, ակոհոլային

post-graduate and residency program students and other payments.

**Benefits** – Monthly or lump sum assistance to population provided by the State and/or community budgets, by social assistance funds, trade unions, and enterprises and from other sources. The main types of provided benefits are:

1. Poverty Family Benefits– targeted social assistance to the families in need and vulnerable groups of the population in order to provide financial support.

2. Unemployment benefit – assistance, which is provided to unemployed citizens of working age, who had a status of an unemployed (are registered at the state employment service).

3. Assistance to children – lump sum benefits allocated at the birth of the child, assistance provided for child care till the age of 2.

4. Other assistance – assistance to families of persons who died while performing their military duties, funeral assistance, and all type of assistance provided by local authorities, assistance provided for the care after the disabled and the elderly etc.

**Incomes from property** – dividends received from bonds or other securities, incomes from bank investments, incomes received from rent of real estate (flat, garage, cottage, land etc.).

**Incomes from the sale of the property and personal items** – monetary incomes received from the sale of property or personal items (car, jewelry, cloths, furniture etc.) irrespective of their value.

**Incomes received from the own farms of households** have two components:

խմիչքի և ծխախոտի, ինչպես նաև ինքնամթերման միջոցով ստացված և սպառված մթերքի արժեքը: Եկամուտների այս հոդվածը հաշվարկելիս հաշվի չեն առնվում արտադրանքի արտադրության վրա արվող ծախսերը /տրանսպորտային ծախսեր, անասնակերի, գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների, սերմերի, պարարտանյութերի, բույսերի պահպանման միջոցների, անասունների համար նախատեսված դեղամիջոցների գնման և այլ ծախսեր/:

Սպառված բնամթերքը գնահատվում է հաշվետու ժամանակահատվածում նույն ապրանքների միջին գների հիման վրա:

**Աջակցություն բարեկամներից և այլ անձանցից** – ընդգրկում է երկու բաղադրիչ.

1/ դրամական աջակցություն - բարեկամներից, ծանոթներից, այլ անձանցից որպես նվեր ստացված ֆինանսական միջոցներ.

2/ օգնություն բարեկամներից կամ այլ անձանցից – բնամթերքով ստացված աջակցություն դրամական արտահայտությամբ՝ ըստ հաշվետու շրջանի համապատասխան ապրանքների միջին գների:

**Արտոնություններ և սուբսիդիաներ** – բնակչության հատուկ խմբերին /հաշմանդամներ, Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ, ազատամարտիկներ, զոհված ազատամարտիկի ընտանիքներ, բազմազավակ ընտանիքներ, և այլն/ տրամադրվող արտոնություններ՝ առանձին ծառայությունների վարձավճարների դիմաց, հանգստյան և առողջարանային ուղեգրերի արժեքը, որը վճարվել է կազմակերպության, սոցիալական ապահովության մարմնի, հասարակական կազմակերպության կամ այլ հովանավորի կողմից, միջքաղաքային տրանսպորտի և կապի ծառայություններից օգտվելու համար տրամադրվող զեղչեր:

**Խնայողությունների, փոխառությունների օգտագործում և տնային տնտեսությանը վերադարձված պարտքի գումար** –

1. Monetary incomes received from the sale of agricultural products which were produced at the own farm of the household.
2. Cost of consumed products received from the household's own farm and home-produced food – includes the cost of food products received from own farm, alcoholic beverages and tobacco, as well as consumed self processed food products. While calculating this article of incomes the costs related with production of goods are not considered (transportation costs, cost of feed, cost of agricultural tools and equipment, costs of seeds and fertilizers, medications for livestock and etc.).

The cost of food consumed is estimated according to the average prices of the corresponding products in the reporting year.

**Assistance from relatives and other persons – consists of two components:**

1. financial assistance – money received as a present from relatives and other persons
2. assistance from relatives and other persons - cost of assistance received in kind calculated according to average prices of corresponding goods of the reporting period.

**Privileges and subsidies** – privileges to special groups of population (disabled, participants of the Second World War, participants of Kharabagh conflict, families of victims of Kharabagh conflict, families with many children etc.) for payment of certain services, the fee of the sanatorium and resort referrals paid by the organization, social security body, non-governmental organization or other sponsors, privileges on local



հետազոտության ընթացքում օգտագործված անձնական խնայողությունների գումարը, բանկերում կատարված ներդրումների օգտագործում և այլն: Սույն հոդվածով հաշվի են առնվում նաև տնային տնտեսությանը վերադարձված պարտքի գումարները:

**Այլ եկամուտներ** – վերը չհիշատակված այլ դրամական մուտքեր:

#### **Տնային տնտեսությունների ծախսեր**

Տնային տնտեսությունների նյութական վիճակը բնութագրող հաջորդ ցուցանիշը՝ տնային տնտեսության ծախսերը, սույն ժողովածուի մեջ ներկայացված է սպառողական ծախսերի միջոցով: Տնային տնտեսությունների կենսամակարդակի գնահատման ընտրանքային հետազոտությունը ուսումնասիրում է տնային տնտեսությունների կողմից կատարված բոլոր տեսակի սպառողական ծախսերը:

**Ծախսեր** – տնային տնտեսությունների կողմից հաշվետու ժամանակահատվածում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց կատարված վճարումների գումարն է, նրանց կողմից բաժնետոմսերի, ինչպես նաև շինարարական աշխատանքների կատարման, բարեկամներին և ծանոթներին տրամադրված աջակցության, տարադրամի, անշարժ գույքի ձեռքբերման, բանկային ներդրումների կատարման, հարկերի վճարման /շահութահարկից բացի/ և այլ ներդրումների կատարման համար կատարված վճարումների գումարն է:

**Սպառողական դրամական ծախսեր** - տնային տնտեսությունների կողմից սննդամթերքի, ոգելից և ոչ ոգելից խմիչքի և ծխախոտի, ոչ պարենային ապրանքների գնման, ինչպես նաև ծառայությունների վճարման նպատակով կատարվող դրամական ծախսերն են: Հաշվի են առնվում տնային տնտեսությունների կողմից վերոհիշյալ նպատակներով կատարվող բոլոր ծախսերը, անկախ դրանց կատարման վայրից /առևտրային ցանց, ձեռնարկության, կազմակերպության պահեստ, շուկա կամ առանձին քաղաքացիներ/: Սույն հոդվածն ընդգրկում է նաև ընտանի կենդանիներին կերակրելու համար գնված ապրանքների և մթերքի

transportation and communication services.

**Use of savings and loans and the sum of debts returned to the household** – the sum of personal savings used within the period the survey was conducted, use of investments in banks etc. Sums of debts returned to the household are also considered by this article.

**Other incomes** – other monetary entries, which have not been mentioned yet.

#### **Expenditures of households**

The next indicator describing the material state of households is the indicator of household's expenditures, which is presented in this report through consumer expenditures. The sample survey of the living standards of households studies all types of consumer expenditures of the households.

**Expenditures** – are the sum of money the households paid to acquire goods and during the reporting period, as well as the sum of money paid for purchase of bonds, foreign currency and real estate, bank investments, construction activities, sum of money provided as assistance to relatives and acquaintances, tax payments (except for profit tax) and other investments.

**Monetary consumer expenditures** – These are monetary expenses made by households to buy food products, alcoholic and non-alcoholic beverages, tobacco and non-food products, as well as to pay for services. All expenditures made by households for the above-mentioned purposes irrespective of the place they were made (outlets, enterprises, warehouse of an organization, market and individual citizens). This article also includes the cost of goods and food for pets (cats, dogs, parrots

արժեքը /կատուներ, շներ, թութակներ և այլն/:

Տնային տնտեսությունների **սպառողական ծախսերը** ներառում են.

• **Պարենային ապրանքներ**

- միս և մսամթերք
- կաթ և կաթնամթերք
- ձու
- ձուկ և ձկնամթերք
- շաքար և հրուշակեղեն
- կարագ և բուսական յուղեր
- կարտոֆիլ
- բանջարաբուստանային կուլտուրաներ
- մրգեր, հատապտուղներ, ընկուզագգիներ և խաղող
- հաց և հացամթերք
- ակոհոլային խմիչք
- ծխախոտ
- այլ մթերք
- սնունդ տանից դուրս

• **Ոչ պարենային ապրանքներ:**

- հագուստ, կտորեղեն, կոշիկ
- կահույք, գորգեր, կուլտուր-կենցաղային նշանակության ապրանքներ
- հիգիենայի պարագաներ և դեղամիջոցներ
- տրանսպորտային միջոցներ, դրանց պահեստամասեր և վառելիք
- այլ ոչ պարենային ապրանքներ

• **Ծառայություններ:**

- բնակարանային-կոմունալ կենցաղային
- մշակութային, հանգստի և սպորտի
- կրթության, ուսուցում և նախադպրոցական դաստիարակության
- բժշկական և առողջարանային
- տրանսպորտի և կապի
- այլ

**Պարենային, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների դիմաց կատարվող ծախսերի գումարը կազմում է ընդամենը սպառողական ծախսերը:**

**Սպառողական ծախսերի հիմնական բաղկացուցիչների բնութագրերը**

**Պարենային ապրանքների վրա կատարվող ծախսեր** – տնային տնտեսության կողմից սննդամթերքի, ակոհոլային

etc.).

The consumer expenditures of households include:

• **Food products**

- Meat and meat products
- Milk and milk products
- Eggs
- Fish and fish products
- Sugar and confectionery
- Butter and vegetable oils
- Potatoes
- Vegetable crops
- Fruits, berries, nuts and grapes
- Bread and bakery
- Alcoholic beverages
- Tobacco
- Other food products
- Food consumed outside the home

• **Non-food products**

- Clothing, textiles, shoes
- Furniture, carpets, cultural goods and home electronic equipment
- Hygiene items and medications
- Means of transportation, their spare parts and fuel
- Other non-food products

• **Services**

- Housing utilities
- Cultural, rest and sport
- Education, training and preschool education
- Medical and resort
- Transportation and communication
- Other services

The sum of expenditures made to buy food and non food products and services comprise total Consumption Expenditures.

Definitions of Components of con-

խմիչքի և ծխախոտի գնման համար կատարվող դրամական ծախսերը, ինչպես նաև տանից դուրս սնվելու համար կատարված ծախսերը /ռեստորանում, սրճարանում, ճաշարանում և այլն/:

Սննդամթերքի հիմնական խմբերն են.

- **Միս և մսամթերք** – տավարի, խոզի, ոչխարի և թռչնի միս, երշիկեղեն, մսամթերքի կիսաֆաբրիկատներ, մսամթերքի պահածոներ և այլն:
- **Կաթ և կաթնամթերք** – կաթ, մածուց, կաթնաշոռ, թթվասեր, կոշտ և փափուկ պանիրներ, կաթնամթերային պահածոներ, չոր կաթ և այլն:
- **Չուկ և ձկնեղեն** - թարմ, աղ դրված և ապխտած ձուկ, ձկան ֆիլե և կիսաֆաբրիկատներ, ձկան պահածոներ և այլն:
- **Շաքար և հրուշակեղեն** – շաքար-շաքարավազ, շաքար ռաֆինադ, կոնֆետներ, շոկոլադ, մուրաբա, ջեմ, պովիդոլ, մեղր, տորթեր, թխվածքաբլիթներ և այլն:
- **Կարագ և բուսական յուղեր/ձեթեր** - բոլոր բուսական յուղերը /արևածաղկի, ձիթապտղի, եգիպտացորենի և այլն/, մարգարին
- **Բանջարաբոստանային կուլտուրաներ** – թարմ, թթու դրված, պահածոյացված, մարինացված բանջարեղեն /լոլիկ, վարունգ, բազուկ, գազար, սոխ, կաղամբ, սխտոր, բադրիջան, դդմիկ, կանաչեղեն և այլն/, ձմերուկ, սեխ և այլն:
- **Կարտոֆիլ** – թարմ կարտոֆիլ և դրանից պատրաստված մթերք:
- **Միրգ, հատապտուղներ, ընկուզագլիներ** – խնձոր, տանձ, սալոր, բալ, ծիրան, դեղձ, ելակ, խաղող, գետնամորի, մորի, հաղարջ, ընկույզ, խաղող և այլն – թարմ, չորացրած, պահածոյացված և այլ տիպի մթերումներ:
- **Հաց և հացամթերք** – հացաբուլկեղեն, ալյուր, մակարոնեղեն, ձավարեղեն, չոր ոլոռ և լոբի, դրանցից պատրաստված սննդային կոնցենտրատներ:
- **Այլ սննդամթերք** – սունկ, թեյ, սուրճ, քացախ, օսլա, մայրնեզ, համեմունքներ, աղ, ոչ ալկոհոլային խմիչք և

sumer expenditures

**Expenditures on food products** – money spend by households to buy food products, alcoholic beverages and tobacco, as well as on food outside the home (restaurant, cafe, canteen etc.).

The main groups of food products are as follows:

- **Meat and meat products** – beef, mutton, pork and poultry, sausages, semi-finished meat products, canned meat etc.
- **Milk and milk products** – milk, matsoun, cottage cheese, sour cream, hard and soft cheese, canned milk products, dry milk etc.
- **Fish and fish products** – fresh, salted and smoked fish, filleted fish and semi-finished products, canned fish etc.
- **Sugar and confectionary** – sugar – granulated sugar, sugar, sweets, chocolate, jam, honey, cakes, biscuits and etc.
- **Butter and vegetable oils** – all vegetable oils (sunflower, olive, corn), margarine.
- **Vegetable crops** – fresh, pickled, canned, marinated vegetables (tomato, cucumber, beet, carrot, union, cabbage, garlic, egg-plant, squash, greens etc.), water melon, melon etc.
- **Potatoes**- fresh potatoes and products made from it.
- **Fruit, berries, nuts** – apple, pear,

այլն:

**Ոչ պարենային ապրանքների զննան համար կատարված ծախսեր** – տնային տնտեսության դրամական ծախսերը կատարված տնային տնտեսության առանձին անդամների անձնական օգտագործման ոչ պարենային ապրանքների համար /հագուստ, կոշիկ, անձնական հիգիենայի պարագաներ և այլն/ և տնային տնտեսության բոլոր անդամների կողմից համատեղ օգտագործվող ոչ պարենային ապրանքների զննան համար /կահույք, մշակութային կենցաղային նշանակության ապրանքներ, տրանսպորտային միջոցներ և այլն/: Հաշվի են առնվում ինչպես նոր, այնպես էլ օգտագործված ոչ պարենային ապրանքների զննան համար կատարված ծախսերը:

Ոչ պարենային ապրանքների հիմնական խմբերն են.

- **Հագուստ, կտորեղեն, կոշիկեղեն** – ձմեռային, ամառային, այլ սեզոնային, սպորտային, տնային հագուստ, կոշիկեղեն, կտորեղեն, մորթեղեն, կաշի և այլն:
- **Կահույք, գորգեր, մշակութային-կենցաղային նշանակության ապրանքներ** – ցանկացած տեսակի կահույք, հայելիներ, կենցաղային էլեկտրասարքեր, լամպեր և լուսավորիչ սարքեր, հախճապակե, ճենապակե, կերամիկական, մետաղյա, ապակե սպասք, գորգեր, տեքստիլ ապրանքներ, հեռուստացույցներ, տեսաձայնագրիչներ և համակարգիչներ, լուսանկարչական ապարատներ, սպորտային պարագաներ, տպագրական հրատարակություններ և այլն:
- **Հիգիենայի պարագաներ և դեղամիջոցներ** – սանրեր, ատամի խոզանակներ, մազակալներ, սրիչներ, անձեռոցիկներ, օճառ, օճանելիք, քսուքներ, կոսմետիկա, դեղամիջոցներ, վիրակապեր, բամբակ, ակնոցներ, ջերմաչափեր, ներարկիչներ և այլն:
- **Տրանսպորտային միջոցներ և դրանց պահեստամասեր, վառելիք** – մարդատար մեքենաներ, մոտոցիկլետ-

plum, cherry, apricot, peach, strawberry, raspberry, currants, nuts, grapes etc. – fresh, dry, canned and other

- **Bread and bakery** – bakery, flour, pasta, grain-crops, dried peas and beans, food concentrates
- **Other food products** – mushroom, tea, coffee, vinegar, starch, mayonnaise, salad dressings, salt, non-alcoholic beverages etc.

**Expenditures on the purchase of non-food products** – money spent by households to buy non-food products for the personal use of household members (clothing, shoes, hygiene items etc.) and to buy non-food products for common use by all members of the household (furniture, cultural-housing goods, means of transportation etc.). Expenses on both new and second-hand non-food products are considered.

Main groups of non-food products are:

- **Clothing, textiles, shoes** – winter, mid-season, summer, sport, home clothing, shoes, textiles, furs, leather etc.
- **Furniture, carpets, cultural goods and home electronic equipment** – all types of furniture, mirrors, home electronic appliances, lamps and lighting appliances, crystal, porcelain, ceramic, metal and glass ware, carpets, textiles, TV-sets, video players, audio players, personal computers, photo cameras, sport items, publications etc.
- **Hygiene items and medicine** – combs, tooth brushes, hair-pins, ra-

ներ, հեծանիվներ, դրանց պահեստամասեր, բենզին և այլ վառելանյութեր:

- **Այլ ոչ պարենային ապրանքներ** – անձրևանոցներ, դրամապանակներ, պայտասակներ, ճամպրուկներ, ժամացույցներ, ոչ թանկարժեք զարդեղեն, ոսկեղեն, լվացող նյութեր և կենցաղային քիմիայի նյութեր և այլն:

**Կենցաղային ծառայությունների վճարման համար կատարվող ծախսեր** – տնային տնտեսության դրամական ծախսերը բոլոր տեսակի կենցաղային ծառայությունների վճարման համար, որոնք տրամադրվել են թե՛ ձեռնարկությունների ու կազմակերպությունների կողմից և թե՛ առանձին քաղաքացիների կողմից:

Ծառայությունների հիմնական տեսակներն են.

- **Բնակարանային կոմունալ ծառայություններ** – բնակարանի վարձ, ջրամատակարարման և ջրահեռացման, գազամատակարարման, ջերմամատակարարման, էլեկտրաէներգիայի և այլ ծառայությունների վարձավճարներ:
- **Կենցաղային ծառայություններ** – հագուստի, գլխարկների, ակսեսուարների, կոշիկեղենի վերանորոգում, կահույքի և կենցաղային տեխնիկայի պատրաստում և վերանորոգում, բնակարանի և տնտեսական շինությունների ընթացիկ և կապիտալ վերանորոգում, տրանսպորտային միջոցների վերանորոգում և տեխնիկական սպասարկում, վարսավիրական, քիմիական մաքրման ծառայություններ, բաղնիք և շոգեբաղնիք այցելությունների, վարձույթատրման և ծիսակատարությունների անցկացման ծառայություններ և այլն:
- **Մշակութային, հանգստի և սպորտային ծառայություններ** – թատրոններ, կինոթատրոններ, կրկեսներ, կենդանաբանական այգիներ, թանգարաններ, ցուցահանդեսներ, դիսկոտեկներ, խմբակներ, լողավազաններ այցելելու վճարներ և այլն:

zors, napkins, soup, perfume, ointment, cosmetics, medicine, bandages, cotton, glasses, thermometers, syringe etc.

- **Means of transportation and their spare parts, fuel** – cars, motorcycles, bike, their spare parts, petrol and other fuel.

- **Other non-food products**- umbrellas, wallets, bags, suitcases, watches, non-precious jewelry, gold jewelry, detergents and household chemical goods etc.

**Expenditures for housing services** – money spent by household to cover charges for all kind of housing services, provided by enterprises, organizations and individual citizens.

Main types of services are as follows:

**Housing and communal services** – housing charges, charges for water delivery, wastewater services, gas, heating, electricity and other services.

- **Housing services** – repair of clothing, hats, accessories, shoes, making and repairing furniture and housing equipment, on-going and major repairs of the flat and building works, renovation and technical maintenance of transportation means, hairdressing and dry cleaning services, visiting bath houses, renting and ritual services etc.
- **Cultural, rest and sport services** – cost of tickets of theatres, cinema, circus, zoo, museums, exhibitions, discotheques, clubs, swimming pools etc.

- **Կրթական, ուսուցման և նախադպրոցական դաստիարակման ծառայություններ** - երեխաների նախադպրոցական հաստատություններում դաստիարակման վարձավճարներ, վճարովի ուսումնական հաստատություններում ուսման և դասընթացների հաճախման վարձավճարներ, մասնավոր պարապուրների վճարներ:
- **Բժշկական և առողջարանային ծառայություններ** - բոլոր տեսակի բժշկական ծառայությունները, որոնք տրամադրվում են պետական և մասնավոր բուժհաստատությունների կողմից, երեխաների և մեծահասակների համար առողջարանային ուղեգրերի վճարներ:
- **Տրանսպորտային ծառայություններ** – տրանսպորտի բոլոր միջոցներով ուղևորների և բեռների փոխադրման /երկաթուղի, ավտոմեքենա, ծովային, օդային/ հաղորդակցման բոլոր տեսակներով /քաղաքային, միջքաղաքային, միջազգային/ ծառայություններ:
- **Կապի ծառայություններ** – հեռախոսի տեղակայման և օգտագործման, տանը և տանից դուրս կատարված հեռախոսագանգերի /տեղական, բջջային, միջքաղաքային, միջազգային/ վճարումներ, ռադիոկետի, հեռագրի, ծանրոցների և փաթեթների ուղարկման, ինչպես նաև դրամական փոխանցումների կատարման վճարներ և այլն:
- **Այլ ծառայություններ** – իրավաբանական և այլ խորհրդատվական ծառայություններ, տպագրական ծառայություններ, բանկային բաժանմունքների և նմանատիպ այլ ծառայություններ:

#### Սննդամթերքի սպառում

Սույն ժողովածուի մեջ բերված են տվյալներ ամսվա ընթացքում մեկ անձի կողմից սննդամթերքի միջին սպառման մասին: Սպառված սննդամթերքին է վերաբերվում այն մթերքը, որը հաշվետու ժամանակահատվածում գնվել է, ստացվել է սեփական տնտեսությունից, մթերվել է (որսի, ձկնորսության ժամանակ,

- **Educational, training and preschool education services** – fees for pre-school education of children, study and attendance of courses in paid education institutions, fees for private lessons.
- **Medical and resort services** – all types of medical services provided by state and private medical institutions, fees for referral of children and adults to sanatoriums.
- **Transportation services** – Transfer of passengers and cargo by all means of transportation (railway, cars, by water, by air).
- **Communication services** – payments for the installation and use of telephone, telephone calls (local, cellular, intercity, international), fees for sending telegrams, packages and parcels, as well as monetary transfers etc.
- **Other services** – legal consultancy, printing services, bank department and other services.

#### Food Consumption

The publication provides data on the average monthly per capita food consumption. The term “consumed food” refers to products which were purchased, received from the own farm and stored (during the hunting or fishing, in the forest etc.) as well as received as donation from other sources in the reporting period.

Food consumed in public catering establishments is not included in the total volume of consumed food. Expenditures on food consumed outside the home are considered only in the general monetary expenditures of households on food

անտառում և այլն), ինչպես նաև այլ աղբյուրներից ստացվել է որպես նվիրատվություն:

Հանրային սննդի վայրերում սպառված սննդամթերքը չի ներառվում սպառված սննդամթերքի ընդհանուր ծավալի մեջ: *Տնից դուրս սնվելու համար կատարված ծախսերը հաշվի են առնվում միայն դրամային արտահայտությամբ սննդի վրա կատարված տնային տնտեսության ընդհանուր ծախսերում:*

Ժողովածուն ներկայացնում է սննդամթերքի սպառումը հետևյալ խմբերի կտրվածքով՝

- Հացամթերք (հաց և մակարոնեղեն, այլուր):
- Կարտոֆիլ
- Բանջարեղեն և բոստանային կուլտուրաներ
- Սրգեր, հատապտուղներ, խաղող (ներառյալ չորացվածները, վերահաշվարկված թարմերի),
- Շաքար (ներառած քաղցրավենիքի պատրաստման համար օգտագործված շաքարավազը)
- Միս և մսամթերք
- Չկնամթերք
- Կաթ և կաթնամթերք, մածուկ
- Չու
- Բուսական յուղեր, կարագ, մարգարին

### 1.6. Եկամուտների ու ծախսերի անհավասար բաշխվածության գնահատումը

Ինչպես արդեն նշվել է, տնային տնտեսությունների կենսապայմանների գնահատման հիմքում ընկած են ծախսերի ցուցանիշները, որպես առավել վստահելի ցուցանիշներ՝ եկամուտների վերաբերյալ տվյալների համեմատ, քանի որ վերջիններս հաճախ թաքցվում կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից:

Տնային տնտեսությունների՝ ըստ նյութական բարեկեցության մակարդակի

products.

The publication provides the consumption of food products in the following groups:

- Bread and bakery (bread, pastai, flour)
- Potatoes
- Vegetables and vegetable crops
- Fruit, berries, grapes (including dry fruits reconstituted as fresh),
- Sugar (including sugar used for confectionery)
- Meat and meat products
- Fish products
- Milk and milk products
- Eggs
- Vegetable oils, butter, margarine

### 1.6. Assessment of inequality in distribution of incomes and expenditures

As already mentioned, indicators on expenditures serve as a basis for the assessment of the living standards of households as more reliable indicators in comparison with the data on incomes because the latter are often reduced by the interviewees during the interviews.

To study the distribution of households in terms of inequality the method of grouping is used. According to this method households are divided into **deciles** due to the increasing order of the values of indicators being studied. The population under observation, for example, per capita monetary incomes, is distributed in increasing order and afterwards is divided into ten equal groups.

**Decile ratio of differentiation of population incomes (expenditures)** – is the ratio of the minimal level of incomes (ex-

բաշխման անհավասարությունը ուսումնասիրելու համար օգտագործվում է խմբավորման մեթոդը, համաձայն որի տնային տնտեսությունները բաժանվում են **դեցիլների՝** ըստ դիտարկվող ցուցանիշի արժեքների աճողական կարգի: Դիտարկվող համակցությունը (օրինակ՝ մեկ շնչի հաշվով դրամական եկամուտները), բաշխվում է հերթականությամբ, աճողական կարգով և ապա բաժանվում է տաս հավասար խմբերի:

**Բնակչության եկամուտների (ծախսերի) տարբերակման դեցիլային գործակից** - 10% առավել ապահովված բնակչության եկամուտների (ծախսերի) նվազագույն մակարդակի հարաբերությունն է 10% նվազագույն ապահովված բնակչության եկամուտների (ծախսերի) առավելագույն մակարդակին:

Բնակչության միջև եկամուտների և ծախսերի բաշխման հիման վրա հաշվարկվող կենսամակարդակի գնահատման հիմնական ցուցանիշների (Ջինի գործակիցի, նվազագույն պարենային զամբյուղի, աղքատության պարենային գծի, նվազագույն սպառողական զամբյուղի, աղքատության գծի) վերլուծությունը բերված է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ազգային զեկույցում:

penditures) of best-off 10% members of the population and the highest level of incomes (expenditures) of the most vulnerable 10% of the population.

The analysis of the main indicators of the population living standards assessment calculated on the basis of distribution of incomes and expenditures (Gini coefficient, minimal food basket, food line, minimal consumer basket, poverty line) is presented in the national report “The Social Snapshot and Poverty in the Republic of Armenia”.